# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Յունվարի 1-ին, երկուշաբթի.- Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես աբեղա Այվազյանը: «Հայր մեր»-ից առաջ Գարեգին արքեպս. Ղեքչյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Յունվարի 5-ին, ուրբաթ.- Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը: «Հայր մեր»-ից առաջ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին Վեհարան, որտեղ փնօրհնեքի արարողությունը կատարելուց հետո, գնացին սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավետիսը ցնծությամբ նշելու համար:

***Յունվարի 6-ին, շաբաթ.- ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Սուրբ Ծննդյան իր պատգամը ուղղեց հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բազմաթիվ հույրեր:

*Հունվարի 7-ին, կիրակի.- Բ. օր Ծննդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն համորեն ննջեցելոց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Հունվարի 13-ին, շաբաթ.- Ը. օր Ծննդեան: Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբեղա Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Հունվարի 14-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Ծննդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը: Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարվեց ճեմարանավարտ յոթ սարկավագների՝ Արտակ սրկ. Սահակյանի, Աշոտ սրկ. Ղազարյանի, Սամվել սրկ. Կիրակոսյանի, Հայկ սրկ. Պողոսյանի, Արսեն սրկ. Պապուրյանի, Բաբկեն սրկ. Նանյանի և Արման սրկ. Սարոյանի քահանայական ձեռնադրությունը: Ձեռնադրության ավարտին Վեհափառ Հայրապետը «Փա՜ռք քեզ, Աստուած, Փա՜ռք քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փառք քեզ» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

*Հունվարի 21-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ծննդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դանիել աբեղա Թումանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Հունվարի 28-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Ծննդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: